ԱԿԱԴԵՄԻԱ

*Երեկ Գիտությունների ազգային ակադեմիայում անցկացված պրեզիդենտի ընտրության արդյունքներով հաղթող ճանաչվեց ԵՊՀ նախկին ռեկտոր, ակադեմիկոս ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ*

# ԸՆՏՐՎԵՑ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 4-ՐԴ ՊՐԵԶԻԴԵՆՏԸ



Առավոտյան, երբ սկսվեց ԳԱԱ ընդհանուր ժողովը, որն, ի դեպ, փակ էր, եւ լրատվամիջոցների ներկայացուցիչներին թույլ չտրվեց մասնակցել թեկնածուների ծրագրերի քննարկմանը, արդեն ակադեմիայում բոլորը գիտեին «անցնելու է Ռադիկ Մարտիրոսյանը»: Մայր բուհի նախկին ռեկտորի «պաշտոնեական առաջխաղացման» մասին, թերեւս, խոսվում էր շատ ավելի վաղ, երբ վերջինս պարտվեց ԵՊՀ կառավարման խորհրդի նախագահի ընտրություններում: Եւ փաստորեն, տարածված լուրերը, ինչպես ասում են, օդից վերցրած չէին:

Երկու ժամ տեւած փակ ժողովի ավարտից հետո պարզվեց, որ ԳԱԱ պրեզիդենտի պաշտոնի համար առաջադրվել է երեք թեկնածու: Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի առաջարկությամբ առաջադրվել էր ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ակադեմիկոս Վանիկ Զաքարյանը առաջարկել էր ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, նախկին ԿԳ նախարար Էդուարդ Ղազարյանի, իսկ ակադեմիկոս Էդուարդ Չուբարյանը՝ Ռադիկ Մարտիրոսյանի թեկնածությունները:

Ավելորդ չէ նկատել, թե երեք թեկնածուներն իրենց ծրագրերում հատկապես ինչն էին կարեւորել: Մինչ քվեարկությունը, նրանց հետ մեր զրույցների ընթացքում փոքր-ինչ տարակուսելի էր (եթե չասենք, զավեշտական) թեկնածուների միաբերան պնդումները, թե ընտրվելուց հետո կարեւորելու են «ակադեմիայի դեմոկրատացումը», «կառույցի թափանցիկությունը»: Սա այն դեպքում, երբ հենց երեկ, լրագրողները փակ դռների ետեւից էին «հետեւում» քննարկումներին, ճիգ ու ջանք թափում ինչ-որ տեղեկություններ ստանալու:

Փորձեցինք փակ ժողովի մասնակիցներից ճշտել, թե թեկնածուներից որի ծրագիրն էր հաջողված: Ակադեմիկոս ՅՈՒՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ բնավ տպավորված չէր եւ որեւէ մեկի ծրագրի մասին դրական արտահայտվել չցանկացավ. *«Եթե 15 րոպե են տալիս, պարզ չէ՞, որ թեկնածուներն ընդհանուր խոսքեր պիտի ասեն»*,- նկատեց նա: Վերջինս, ի դեպ, բացասական գնահատեց թեկնածուներից մեկի՝ Էդուարդ Ղազարյանի աշխատանքը, քանի որ համոզված է՝ *«ինքն էլ մեղք ունի ակադեմիայում ստեղծված այս իրավիճակի մեջ»*:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ կարծիքով, երեք թեկնածուների ծրագրերը միմյանցից *«էականորեն չեն տարբերվում»*:

Նախապես հայտնի էր, որ առաջադրվելու է նաեւ ճարտարագիտական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար ՅՈՒՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ թեկնածությունը: Երեկ ակադեմիկոս Սարգսյանը նշեց, որ չի ցանկացել առաջադրվել երկու պատճառով: Նախ՝ գիտակցել է, որ ինքը *«խիստ պահանջարկված չէ»* եւ երկրորդ՝ *«չկա հստակ առաջադրման ժամանակահատված, որ ես կարողանայի իմ ծրագրերը պատրաստել»*: Նշենք, որ, ըստ ԳԱԱ կանոնադրության, նույն օրը առաջադրվում են թեկնածուները, նույն օրն էլ քվեարկվում:

Այդպես էլ պարզ չդարձավ, թե ինչու էին իրենց թեկնածությունը առաջադրելուց հրաժարվել եւս երկու թեկնածու, որոնք մինչ այս նույնպես մտադիր էին պայքարել պրեզիդենտի պաշտոնի համար:

Ակադեմիկոս Ռոբերտ Աթոյանը («Ավտոմատ կառավարման համակարգերի» ԳՀԻ-ի գործադիր տնօրեն) եւ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Յուրի Շուքուրյանը գերադասեցին լռել: Այն, որ քվեարկության արդյունքները միանգամայն հանգիստ ընդունեցին պարտված երկու մրցակիցները, սա եւս վկայում էր, որ Լենսեր Աղալովյանն ու Էդուարդ Ղազարյանը պարզապես ձեւականորեն էին առաջադրվել: Համենայն դեպս, նրանց համար կարծես ոչ մի անակնկալ բան էլ տեղի չունեցավ:

Չարդարացան օրվա սկզբում արված կանխատեսումները, թե ընտրական գործընթացը ձգձգվելու է եւ առնվազն եռափուլ քվեարկություններից հետո կընտրվի պրեզիդենտը: Մինչդեռ երեկ 79 ակադեմիկոսներն ու թղթակից անդամները (ըստ ցուցակային կազմի) տրամադրված էին ամեն ինչ մեկ հարվածով ավարտել ու պրծնել: Այդպես էլ եղավ՝ ընտրությունն ավարտվեց մեկ փուլով: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ռ.Աթոյանը, ամփոփելով քվեարկության արդյունքները, հայտարարեց, որ Լենսեր Աղալովյանը ստացել է 35 «կողմ» եւ նույնքան էլ «դեմ» ձայներ, Էդուարդ Ղազարյանը՝ 36 «կողմ» (37 «դեմ») եւ Ռադիկ Մարտիրոսյանը՝ 46 «կողմ» (27 «դեմ») ձայներ: Ընդհանուր առմամբ անվավեր է ճանաչվել 21 քվեաթերթիկ:

Թեեւ ԳԱԱ նախագահությանը հայտնի էր ՊՈԱԿ-ի մասին օրենքը, ըստ որի 65 տարին լրացած անձը իրավունք չունի ընտրվելու գործադիր մարմնի ղեկավար, սակայն գիտնականներն այնուամենայնիվ պրեզիդենտ ընտրեցին 70-ամյա թեկնածուին:

Ռադիկ Մարտիրոսյանը դրանում ոչ մի ողբերգություն չի տեսնում. *«Ընդամենը մեկ շաբաթ առաջ Իտալիայի՝ հսկա երկրի պրեզիդենտ ընտրեցին 81 տարեկան մի մարդու: Դա ընտրողների խնդիրն է»*,- հայտարարեց նորընտիր ղեկավարը:

*ԿԻՄԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*